ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Նորակերտ, norakertgyux@mail.ru

«08» ապրիլի 2021թ.
գ. Նորակերտ
թիվ 91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավարի կողմից ընդունած թիվ 26-29 որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ *ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> մարտի 2021թ. N 26

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի բնակիչներ Ժուլետա Իոսիֆի Սահակյանը (ծնված 04.01.1967թ.), Անահիտ Սահակի Սահակյանը (ծնված 19.11.1989թ.) դիմել են Արմավիրի մարզի Նորակերտ համայնք 8-րդ փողոց թիվ 28 հասցեում գտնվող իրենց պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 11.05.1994թ. թիվ 5 որոշման) 0,07հա օրինական հողամասի, հողամասին կից ավել օգտագործվող 0,0104հա հողամասի, բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ. մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով՝

որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի 8-րդ փողոց թիվ 28 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ժուլետա Իոսիֆի Սահակյանի (ծնված 04.01.1967թ.), Անահիտ Սահակի Սահակյանի (ծնված 19.11.1989թ.) գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,0804հա օրինական տնամերձ հողամասի /ծածկագիր՝ 0011-0015/, հողամասի վրա կառուցված բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների (բնակելի տուն՝ նկուղ 66,6քմ կառուցված 1994թ, բնակելի տուն՝ 98,1քմ կառուցված 1994թ, բաց պատշգամբ՝ 30,1քմ կառուցված 1994թ, զուգարան՝ 1,2քմ կառուցված 1994թ, պարիսպ՝ 2,9քմ

կառուցված 1994թ, հենապատ՝ 0,7քմ կառուցված 1994թ) նկատմամբ՝ շինության 199,6քմ մակերեսով:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները բավարարում են <<ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները:

Հողամասը ընդգրկված չի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Ժուլետա Իոսիֆի Սահակյանի (ծնված 04.01.1967թ.), Անահիտ Սահակի Սահակյանի (ծնված 19.11.1989թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված ընդհանուր օգտագործման հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ ծածկագիր 0011-0015:
4. Բնակելի տանը տալ հասցե՝ գյուղ Նորակերտ 8-րդ փողոց թիվ 28:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ***ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ***

2021 թվականի մարտի 25

Նորակերտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> մարտի 2021թ. N 27

<<ՀԵՑ>> ՓԲԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման 4-րդ մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի 2021 թվականի մարտի 9-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<ՀԵՑ>> ՓԲԸ-ին տալ շինարարության թույլտվություն՝ Նորակերտ համայնք 4-րդ փողոց 3-րդ տուն Արարատ Մարգարյանին պատկանող տարածքի 0,22կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:
2. Սահմանված կարգով իրականացնել տեղական տուրքի գանձումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

2021 թվականի մարտի 30
Նորակերտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<31>> մարտի 2021թ. N 28

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՏՆԵՐԻ, ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի անվանակոչված փողոցների, տների, շենք-շինությունների, հողամասերի համարակալումն ու գրանցումը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքում գտնվող շենք-շինությանը /ծածկագիր 019-007/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Ն. Ստեփանյան փողոց թիվ 9:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ *ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ*

2021 թվականի մարտի 31
Նորակերտ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> ապրիլ 2021թ. N 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԲԱՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 18-րդ կետերով.

որոշում եմ՝

1. Վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի 0,5հա այլ հողատեսք հողամասը (լոտ1, կադաստրային ծածկագիր 04-074-0108-0051) բաց աճուրդով:
   Աճուրդային կարգով հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել 46000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 2300 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 2300 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 ՀՀ դրամ:
2. Վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի 0,3444հա այլ հողատեսք հողամասը (լոտ2, կադաստրային ծածկագիր 04-074-0107-0147) բաց աճուրդով:
   Աճուրդային կարգով հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել 40000 ՀՀ դրամ, մեկնարկային քայլը՝ 2000 ՀՀ դրամ, նախավճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ: Աճուրդի մասնակցության վճարի չափը՝ 5000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ***ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ***

2021 թվականի ապրիլի 02
Նորակերտ համայնք